

# ՄԵՐԱԹԱԹԵՐԹ

ՅԱՐԱԹԱԹԵՐԹ  
Բաժանորդագին՝ 10 ժր. սարկիսն

Հասցի՝  
Ред. на в. "ВЕРАДЗНУТЮНЪ" . — Руче  
Réd. du jour. "VERADZNOUTIOUN" Roustchouk

## ԲԱՅԱՏՐԵՆՔ

III.

Վերականգնող մեր ընդմիջված բացատրությունները 1), մենք կուղենայինք յայտնել ոչանդէսի խմբի մնացողները և ոչանդէսի կերտներին, որ իրանց բանակաւոր մեզ հետ սերիչ ոչինչ չէ, եթէ ոչ բանակաւոր նոյն իսկ իրանց գէտ՝ Արքայի, նախորդ յոգւածներում մենք տեսանք, որ նա ա՛ժմ կանգնած է նոյն տեսական հողի վրայ, որի վրայ մենք կանգնած ենք արդէն սաւորն և վեց տարիից ի վեր։ Այդ ընդհանուր հողն է գիտական յեղափոխական սոցիալիզմը։ Մեր այդ առաջադրածն այնքան ճշգրէ է, որ չենք կարողանում զրկել մեզ մի հաճոյքից և յիշել այստեղ հետեւեալը. — Դեռ 1896 թ., Հնչ. Կ. — թեան այն առաջին ընդհանուր ժողովի միջոցին, երբ մի կողմից դաւերի շնորհով և միւս կողմից Հնչ. Կ. — թեան շարքերում գոյութիւն ունեցող նացիօնալիստական տարրերի ընթացքով վտանգւած էր Հնչակեան Մրազրի, նոյն ոչանդէսի խմբի Գայաւարտարեան տակ ստորագրողներից մէկը կատարեց մէկ օգտակար գեր։ Մեզ հետ կող առ կող, նա շատագոյ ու պաշտպան հանդիսացաւ Հնչակեան Մրազրի, իբրև սոցիալիստական ծրագրի, և ինքն էլ լինելով Հնչակեան, այդ անունը համարում էր, ինչպէս մենք, իբրև համանիշ գաղափարապէս սոցիալ-դեմոկրատ անուան հայերիս մէջ։ Վերոյիշած ընդ. ժողովի Արձանագրութիւններում են գրտնում նրա ճառերի ամփոփումները, որոնք լիովին հաստատում են մեր ասածը և որոնց տակը գրւած կան նոյն ընկերի ստորագրութիւնները։

Անցողակի կերպով յիշեցնելով այդ պարագան, մենք չենք ուզում վէճի բռնել, այլ դրանով մի տարբերակ լրջա է սփռում ոչանդէսի խմբի ներկայի քրքրնադատութեան արժանիքի վերայ այն Մրազրի գէտ, որը նա

համարում էր իրանը։ Ճիշդ է, ժամանակն առաջ է գնում և մարդիկ էլ փոխում են, բայց... բայց կարծում ենք, որ ժամանակը չը պէտք է ի շարք ծառայել ոչանդէսի խմբի ներկայացուցչի քննադատական յատկութիւններին և ստիպէր նրան գաղափարների շփոթութեան մէջ ընկնել, փոխարէն աւելի լուսաւորելու ու դասաւորելու դրանց։ Մէկ օրինակ։ Մենք արդէն տեսնք, որ Հնչակեան Մրազրի գէտ նա արձակում է իր սլաքը, ցտենալով նրա գլխաւոր պակասութիւնը ունի հարցերի տակաւում մէջ, այսինքն մի կողմից հեռաւոր նպատակի, այն է սոցիալիզմի իրագործման և միւս կողմից մտնալի նպատակի, այն է բռնապետական կարգերի տակաւում և ուսման վարական սահմանադրութեան հաստատման միջև։ Մեր առաջին յոգւածում մենք ցոյց տուինք, որ դա ուղիւթիւն չէ և ոչ էլ զօրի քան է բռնադատ սիկ կերպով անւանել այն ունի հարցում, այլ թէ դա հայ պրոլետարիատի մի եւ նոյն կուսի երկու յարաբերական ժախջիւն են. առանց ձեռք բերելու քաղաքական պատմութիւնները՝ նա չէ կարող հասնել սոցիալիզմի իրագործման, եւ սակայն ոչանդէսի խմբի կողմից այդ երեւակայական ուղիւթիւնը բաւական է նրկատում իբրև գաղափարաւորութիւն մեր սոցիալիզմի։ Բայց արի և տես, որ ոչանդէսի խմբի տեսակէտից նոյն ունի հարցերի կերպով մեզ առաջ դրանք պիտի ենթարկէ նաև Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը։ Սա վերջնաճրատարակեց իր պաշտօնական Մրազրի և բանից դուրս է գալիս, որ դրանում էլ նպատակների ուղիւթիւն կայ, այն է՝ ոչանդէսի նպատակն և նրա փոխարինումը հանրապետութեամբ հաստատած ուսման վարական սահմանադրութեան վրայ։ Անշուշտ այդ ուղիւթիւնն չէր

հող Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատներն էլ նոյնպէս արժանի չեն սոցիալիստ անուան, ինչպէս մենք։ Բայց ցաւը նրանումն է, որ իր Մրազրով, ինչպէս տեսանք մեր առաջին յոգւածում, ինքը ոչանդէսի խմբին էլ մեզ հետ զոհ է նոյն ուղիւթիւնն։ Ճիշդ է, նա չէ գնում ոչ հեռաւոր կամ վերջնական և ոչ մտաւայ նրկատակներ, բայց տրամաբանական լինելու համար նա նոյն այդ ասում է այլ խօսքերով ու ձեռով և դրա շնորհով էլ մի քանի տեղ սայթաքում իր հակառակիւններից։

Բայց անցնենք։ Այդ բոլորն ասելով, մենք հեռու ենք այն մտքից, թէ հարկ չը կայ վերաքննութեան ենթարկել հին ծրագրային տեսութիւնները և, միջոց կանգնած նրա հիմնական, սոցիալիստական, սկզբունքների հոյի վրայ, աւելի ճշգրէ, աւելի ամփոփել, աւելի կանոնաւորել նրանց՝ համաձայն գիտական մտքի և իրականութեան իմաստի, որպէս և օգտակար ընդ իրականութեան մէջ առաջ եկած նորանոր երեւոյթներից և կամ դրանց առաւել զարգացումից։ Ուղիւթիւնութեան մէջ, սրա առաջին համարից սկսած, որպէս և նրանից քիչ առաջ ոչանդէսի մենք ինքներս առաջինը եղանք ձայն բարձրացնող ծրագրային վերաքննութեան անհրաժեշտ պահանջի մասին և շանայինք ընդհանուր կերպով ուրաղ ձեւ այն նոր գործունէութիւնը, որ, մեր կարծիքով, անպայման անհրաժեշտութիւն է դարձել իրականութեան ներկայ պայմաններում։ Եւ այդ աշխատանքը պահանջում է հայ յեղափոխական տարրերի, և առանձնապէս ու մասնաւորապէս հայ սոցիալիստ ընկերների անաչառ, պարտաճանաչ ու լրջամիտ աշակցութիւնը։ Ինքնաքննութիւն թէ՛ թէօրիական և թէ՛ գործնական, այսինքն թէօրիական ու գործունէութիւնը ենթարկել մտքի քննութեան և դեն իրանց գաղափարական վերահսկողութեան տակ — անհրաժեշտ պայմաններն են նրանց

զարգացման, նրանց կենսունակութեան, նրանց նպատակաշարժարութեան, որով և կազմում է յեղափոխական և մանաւանդ սոցիալիստական, կուսակցութիւնների պարտականութիւնը։ Բայց միաժամանակ այդ ինքնաքննութեան հիմնական մի պայմանն է անաչառութիւն, ճշմարտութիւն ու հիմնաւորութիւն։ Բայց և միւս կողմից այդ ինքնաքննութիւնը չէ կարող այլ կերպ լինել, եթէ ոչ անպատճառ և միշտ որոշ սկզբունքների եւ աշխատանքային սեպակէտից ու հիմնական վրայ, և որքան այդ ըսկզբունքներն և աշխատանքային սեպակէտն զիջական, այնքան աւելի նրանց քննութիւնը կը լինի անսպառք իր տրամաբանութեան, հետեւութիւնների ու եզրակացութիւնների մէջ։ Ասել սակայն՝ գիտական, նշանակում է հերքել վերացական գրութիւնը, ուստի և նշանակում է դարձաւ հիմնել իրականութեան բուն իմաստի վրայ, պատմական յայտնի րօպէի պահանջների վրայ և կենսական երկոյթները ներքին արամաբանութեան վրայ։

Այդ հիմունքները, դժբախտաբար, վրկայել են ոչանդէսի խմբի աչքից, երբ նա իրա ունի հարաւորութեան « բովից է անցնում » եղել Հնչ. Կ. — թեան կազմակերպութեան գործունէութիւնն անցեալում, այդ գործունէութեան բնաւորութիւնը, ուղիւթիւնը, մեթօդը և ասպարէզը։ Նրա մտքից վրկայել է պատմական և իրական պայմանների ներքին զօրութիւնը, որը ստեղծել է այդ գործունէութիւնը, որոյնը նրա բնաւորութիւնը, սահմանել նրա ասպարէզը, և կանաչ-ակաւայ, Հնչ. Մրազրի սոցիալիստական թէօրիական կախ կերպով, յեղափոխական ոյժերին մինչև վերջնա մղել բացառապէս դէպի թիւրքահայերի ազատագրութեան գործը։

Իրա մասին՝ յաջորդ, վերջին յոգւածում։

1) Տես «Վերածնութիւն» No 16 եւ 17

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Մեր նայիծնախոսողները մտա-  
տանջութեան առարկաներից մէ-  
կըն էլ այն է թէ՛ արդեօք սահ-  
մանադրական Ռուսաստանը չը  
պիտի՞ շարունակի իր այժմեան  
հայկերական քաղաքականու-  
թիւնը, այլ խօսքերով — նա չը  
պիտի՞ դարձեալ ձգտի ռուսա-  
ցընել, իր մէջ ձուլել այն բոլոր  
մեծ ու փոքր ազգութիւններին,  
որոնք գտնուում են պետութեան  
սահմանների մէջ։ Եւ եթէ այդ-  
պէս պիտի լինի, ինչ շահ կարող  
են ունենալ ուրեմն հայերը ռուս  
յեզափոխականների հետ միանա-  
լուց, ներկայ միապետական ըն-  
ժամբ սահմանադրականի փոխե-  
լու համար։

Այս հարցը որչափ լուրջ ետե-  
ւոյքին լուրջ է երևում, նոյնչափ  
էլ իրապէս զուրկ է լրջութիւնից  
և կարող է միայն ծագել այն-  
պիսի ուղեղներում, որոնց հա-  
մար չափազանց անորոշ է Պաշ-  
տանադրութիւնն առած բանը։

Եւ յիշատի, ի՞նչ է Պաշտա-  
նադրութիւնը։  
Մենք գիտենք, որ Եւրո-  
պայի բոլոր պետութիւնները,  
բացի թիւրքիայից և Ռուսաս-  
տանից, սահմանադրական են։  
Մենք գիտենք նոյնպէս, որ այդ  
պետութիւնների սահմանադրու-  
թիւնները միատեսակ կամ միև-  
նոյնը չեն. մի երկրի համար ա-  
տու՛մ ենք՝ լայն սահմանադրա-  
կան է, իսկ միւսի համար ատու՛մ  
ենք՝ նեղ սահմանադրական է։  
Կը նշանակէ՞ Պաշտանադրութիւ-  
նը լինում է և լայն և նեղ, ու-  
րեմն ի՞նչ բան է նա։

Որպէսզի այս խնդրերը բոլոր-  
ովին պարզ և հասկանալի լինի,  
անհրաժեշտ է շատ լաւ բնութե-  
որ մի ու և է երկրի կամ պետու-  
թեան սահմանների մէջ ապրող  
ամբողջ ժողովուրդը երբէք միա-  
տեսակ տարրերից կազմւած չէ-  
նրանք բոլորն էլ միևնոյն պա-  
հանջներն ու ձգտումները չունեն,  
այլ բաժանուում են մի քանի դա-  
սակարգերի, որոնց տնտեսական  
և նիւթական շահերը ո՛չ միայն  
խրաբից ասարեք են, այլ և շատ  
անգամ իրարու բոլորովին հա-  
փառակ։ Ուրեմն ժողովրդային  
այդ դասակարգերը, զեկալար-  
ւելով միմիանցից տարբեր և հա-  
կառակ շահերով, ունին և տար-  
բեր պահանջներ ու ձգտումներ։  
Եւ ահա այդ շահերի ու պահանջ-  
ների համաձայն, իւրաքանչիւր  
դասակարգ միշտ ձգտում է երկ-  
րի մէջ հաստատել այնպիսի հա-  
տարակական, սօցիալական և քա-  
ղաքական կազմակերպութիւն, ու-  
րը միջոց տար գոհացնելու ի՛ր  
դասակարգային շահերն ու պա-  
հանջները։

Եւ այդ միմիանցից տար-  
բեր ու միմիանց հակառակ դա-  
սակարգային շահերն ու պահանջ-

ները իրարու բաղխելուց է, որ  
պետութեան մէջ յառաջ է գալիս  
մի նոր և ընդհանուր պահանջ,  
այն է՝ մշակել ու հաստատել  
այնպիսի հիմնական օրէնքներ,  
որոնք որոշէին ու սահմանէին  
իւրաքանչիւր դասակարգի տըն-  
տեսական ու քաղաքական իրա-  
ւունքներն ու պարտականութիւն-  
ները։

Ահա՛, պետութեան այդ հիմ-  
նական օրէնքներն են, որ իրենց  
ամբողջութեամբ կոչուում են Պաշ-  
տանադրութիւն։

Պարզ բան է, որ Պաշտանա-  
դրութիւնը մշակելու ժամանակ  
իւրաքանչիւր դասակարգ աշխա-  
տում է իր համար սահմանել կա-  
րելի շափ ընդարձակ իրա-  
ւունքներ և նազ պարտականու-  
թիւններ։ Եւ այդ պարագայում,  
եթէ մի օր և է, նոյնիսկ շատ  
փոքրամասնութիւն կազմող, դա-  
սակարգ, — որը իր դասակար-  
գային շահերի մասին աւելի գի-  
տակցութիւն է ունեցել և քա-  
ղաքական գործունէութեան հա-  
մար աւելի լաւ է պատրաստւած  
եղել, քան միւս դասակարգերը,  
— յաջողում է աւելի ընդարձակ  
իրաւունքներ և նազ պարտակա-  
նութիւններ իւրացնել, իսկ ժո-  
ղովրդի մեծամասնութիւնը իրա-  
ւունքների փշրանքները և պար-  
տականութիւնանց ա՛րեւմտեմ  
բա-  
ժինն է ստանում, այդ պարա-  
գայում, ասում ենք, ստանում  
է այնպիսի Պաշտանադրութիւն,  
որին հասարակօրէն անուանում են  
ճշդ Պաշտանադրութիւն։ Եւ դրա  
հակառակը՝ որչափ իրաւունքներ  
վայել լողնելի շրջանը ընդարձակ-  
ւում է ու պարտականութիւններն  
էլ հաւասարապէս են բաժանուում,  
այնչափ էլ Պաշտանադրութիւնը  
լայն է համարուում։

Հետևապէս, որչափ մի երկ-  
րում ապրող ժողովրդի մեծա-  
մասնութիւն կազմող դասակարգը  
աւելի գիտակից լինի իր դասա-  
կարգային շահերի և աւելի պատ-  
րաստւած լինի քաղաքական գոր-  
ծունէութեան համար, նոյնչափ  
էլ այդ երկրի Պաշտանադրու-  
թիւնը լայն և ընդարձակ կը լի-  
նի։ Իսկ ո՞վ է ժողովրդի մեծա-  
մասնութիւն կազմողը, եթէ ոչ  
միշտ և ամեն տեղ աշխատաւոր,  
արդիւնաբերող դասակարգը։ Ու-  
րեմն, լայն և ընդարձակ Պաշ-  
տանադրութիւն ունենալու հա-  
մար միանգամայն անհրաժեշտ է,  
որ այդ դասակարգը լաւ գի-  
տակցութիւն ձեռք բերած լինի  
իր դասակարգային շահերի մա-  
սին և լաւ վարժւած լինի քաղա-  
քական գործունէութեան համար,  
այլապէս նա փառաւորապէս կա-  
րող է խաբւել միւս, ուրիշ աշ-

\*) Այս նիւթի գիտական ուսում-  
նասիրութեամբ հետաքրքրողներին  
խորհուրդ կը տանք կարլալ Ֆիլիք-  
նանդ կասալի նշանաւոր գրածքը —  
«Պաշտանադրութեան հոսթիւնը» վեր-  
նորոգող, որը թարգմանւած է և հայե-  
րէն լեզուով հրատ. Հնչ. Կուս. Կոստ.

խատանքով ապրելու սովորած  
դասակարգերից։ Եւ այդ գի-  
տակցութիւնն ու քաղաքական  
գործունէութեան փորձառութիւ-  
նը անհրաժեշտ է ձեռք բերել  
մինչ Պաշտանադրութեան մշակելը,  
յեզափոխական գործունէութեան  
շրջանում, որովհետեւ, կրկնում  
ենք, մի երկրի Պաշտանադրու-  
թեան լայն կամ ճշդ լինելը ուղ-  
ղակի կախումն ունի այն հան-  
դամանքից թէ՛ այդ երկրի աշ-  
խատաւոր դասակարգը ո՞րպիսի  
գիտակցութեամբ, ո՞ր աստիճա-  
նի քաղաքական պատրաստակա-  
նութեամբ և ի՞նչ չափով է մաս-  
նակցել Պաշտանադրութեան հա-  
մար մղւած կռւի — յեզափոխու-  
թեան — մէջ։

Թիֆլիս Թորոս  
(Շարունակելի)

### ԻՍ ՆԱՄԱԿՆԵՐԸ Ա. — Ին

Ն Ա Մ Ա Կ Ի

Սիրելի ընկեր !

Թէև վաղուց քեզ խոստացել  
եմ՝ ռուս պահպանողական փա-  
լաս մամուլից ու կեանքից նմուշ-  
ներ գրել, բայց արի տես, որ  
մեր վերջին ընդհ. աւարտական  
քննութիւնները և շքանոր ուսա-  
նողին սովոր նիւթական անտանե-  
լի կարիքները ինձ բոլորովին  
արգելք էին հանդիսանում խոս-  
տումս կատարել։ Ա՛խ, ընկեր  
լան ! գժբաղաբար ասեմ՝ թէ  
բարեբաղտաբար, աղատուցի  
վերջապէս այդ ինձ համար մի-  
անգամայն անտանելի միջավայ-  
րից և գիտութեան ու գեղարուես-  
տի վսեմագոյն տաճարներից,  
աղատուցի վերջապէս ռուսական  
հրէշ ստիկանութեան անապասե-  
լի խուզարկութիւններից ու մըշ-  
տական սպառնալիքներից, ինչ-  
պէս քեզ միշտ էլ գրել եմ, ռու-  
սական համալսարանները և միւս  
բարձրագոյն դպրոցների հեղ-  
ձուցելը մթնոլորտը, խղճի և մըտ-  
քի նողկալի կապանքները կա-  
պում կաշկանդում են ուսանողու-  
թեան էն թարմ և կուրական  
միտքն ու հոգին։ Այժմս, որ  
արդէն, այդ որքան դառն՝ բայց  
նոյնքան քաղցր ու երջանիկ ու-  
սանողական կեանքից մի ուրիշ  
գոյց է աւելի դառն ու փշոտ ճա-  
նապարհի շէժքին եմ թեւակո-  
խում, երբ վերջապէս արդէն  
հեռանում եմ՝ ճիւղալ բանապետու-  
թեան թաթիբով դժոխքի վերա-  
ժած մտքի այդ բարձր խորան-  
ներից, ահա շտապում եմ խոս-  
տումս կատարել։ Թողնելով ու-  
րիշ անդամուայ ռուսական ուսա-  
նողական կեանքը և նորտ արդար  
ու անզուսպ ընդդէմը ընդդէմ  
սպիտակ ցարի բռնակալ միապե-  
տութեան ու նորտ ստակալի ըէ-  
ժիմին, առ այժմս անցնենք մի  
ուրիշ ոչ պակաս հետաքրքիր  
հարցի։

պոնոգական մամուլի շեղուիդա-  
կան քաղաքականութեան, տեն-  
տենցիաների և շովինիստութեան  
մասին գոնէ մի համառօտ տե-  
սութիւն անգամ գրել մեզ շատ  
հեռու կրասնէր, որի համար սի-  
բելի ընկերը դժբաղաբար ստիկա-  
նաձեւ գոնէ առ այժմս միմի-  
այն նոյն պէպի օտար ազգեր  
ունեցած օտարակեր քաղաքակա-  
նութեան և անտեղի յարձակում  
ները և քոյր քու առաջ բաց անելու  
Ռուսաց փողոցային թերթիկ

րի՛ պէպի օտար ազգերը տա-  
ժած՝ առեւտրութիւնների, վարյա՛ա-  
չութիւնների և յարձակումների  
սահմանը անցաւ։ Նորա առանց մի  
որև իցէ հիմունքի, օր ցորեկով  
գոռում, գոչում, բղաւում են, որ  
ռուսաց հպատակ ազգեր իրենց  
տնօրինուած հպատակութեան ան-  
ձուկ սահմանների մէջ փախուած  
չեն մնում, որ նորա համարձակ-  
վում են իրենց անարգ գիւտնա-  
գիտութեան բովերից անցած սըր-  
բազան օրէնքներին հակառակ  
գնալ, որ նորա մի խօսքով չեն  
ուզում ճանաչել, որ Պարսուս-  
լուսական ծուռ խաչից իշատ չկայ  
այլ խաչ. և շէկ նիկոլայից (Եւ-  
րեկ շուտով և կնքմիւր նիկոլայ  
դառնալու բարեբաղտութիւն կու-  
նենայ) իշատ, չկայ այլ նիկո-  
լայ ու։ Ահա ռուս պետութեան և  
իւր վարձկան քսու գիւտնապէտ-  
ների ու հրապարակախօսների  
տենջերի հաւատամբը նոյն ընդ-  
հանուր գիւտնադիտութեան ու-  
ղընձուձը։

Նոյն կարծիքով ռուսահպա-  
տակ օտար ազգեր, որպէս ըստ-  
րուկներ, որպէս իրաւազուրկ  
մահկանացուներ երբէք չպէտք է  
իրաւունք ունենան ուղղափառ  
ուսանների հետ համահասար ի-  
րաւունքներ վայելելու (ականջը  
անչի տաճկաց ոչխա՛ օրէնքի)։  
Բոլոր օտար ազգեր ու ցեղեր նո-  
յն աչքի փշերնին դառել, որոնց  
անգթօրէն ոչնչացնելու և բնա-  
ջինջ անելու համար ձեռք առած  
միջոցների մէջ ոչ մի խտրութիւն  
չեն գնում։ Ես այս բոլորը մի-  
միայն դարտակ բառեր չէ որ  
գրում եմ, նորա ամէն օր և իւ-  
րաքանչիւր մի համարում իրենց  
զանապան օտարակեր օրգաննե-  
րում և պարբերական մամուլում  
ամենաթունալի շանթերով յար-  
ձակվում են անապատ օտա-  
րազգիների վերայ — իննն դաքս  
ֆին, լէհ, հրէա, հայ, մահմե-  
դական են։ Նորա առանց մի  
փոքր խղճի խայթ պալաւ, ա-  
ռանց մի բոպէ իրենց համալսա-  
րանական բարձրագոյն կրթու-  
թիւններից կարմրելու — ալ ու-  
ձախ, տեղի անտեղի, յարձակվում  
են շար բաղդից հալածուած օտար  
ազգերի վերայ։ Վհհադոյն ցարի  
այս վարձու հմուտ շանթաժիտու-  
ները իրենց ստրկական դերը  
սրբութեամբ կատարելու համար՝  
ժախլ մէկ կողմ են գրել և գրա-  
կանական բարձր էրիկան և ի-  
րենց հրապարակախօսական վսեմ

Իսկապէս ասած, ռուս պահ-

կոչումն ու սպագրական սրբազան խօսքը են: են: նոքա կատաղում են, սիրելի ընկերս! որ իրենց հպատակ ազդերը ձուլուելու փոխարէն հետզհետէ ինքնագիտակցութեան և ազատասիրութեան վեհ գաղափարին են հասնում, և մինչև իսկ, մինչև օրս անյաղժ ցարի հրէջ վարձկանները հետ ճակատ առ ճակատ հրազեններով կատաղի կուրի են բռնկում: Ազդերունքները իրենց բարձրագոյն կրթութեամբ մինչև այժմս էլ զեռ շեն ուղում համազուել իրական կեանքի այն տարրական գասով, որ «հարածել» նշանակումէ տարածել, որ իրենց նողկալի թաթերով և բռնակալութեամբ օտարացել հպատակներին ազդակին և մարդկային ինքնագիտակցութիւնը միացնելով, արդար իրաւունքները սրբապղծելով ու զանազան հեղձուցիչ հնէյններով և երկար թրմրած պահել շեն կարող հասնել ժամբ... բառական է որքան տանջելիք, հալածելիք, մերարիւնը ձեռքիք և մեր ամեն մի սրբութիւնը անարգարար կտակաւորիք: Գորա փոխարէն ձեր ամենաբնական վարձարութիւնը այն եղաւ, որ հէնց դուք ինքներդ սեղի տուիք՝ այդ բոլոր ազատասիրական ընդունակութիւնները մեր մեջ զարգացնելու ու մեզ մեր խորքնից սխափեցնելու:

Մտկուա. 1903 թ. Արար. (Շարունակելի)

### ՀՆՉԱԿԵԱՆ

#### ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Յատկապէս կազմուած Մասնախորհուրդի մը կողմանէ հրատարակ հանուած յայտարարութիւններով վառնայի հայ հասարակութիւնը՝ ամսոյ 8-ին, երեկոյան ժամը 8 և կէսին կը հրատարակէր Սահեկնեկնի ժողովարարը ուր պիտի բանաստեղծէր Հնչակեան կուսակցութեան անդամները: Հրատարակութեան նիւթ ունենալով «Հնչակեան կուսակցութեան դիրքը հայ յեղափոխութեան մէջ»:

Հակառակ խիստ անուպաստ օգին, ժողովարարը լեցուն էր հետաքրքիր բազմաթիւ ունկնդիրներով:

Մասնախորհուրդի անդամ պ. Մարդապետներ՝ նախ Մասնախորհուրդի կողմէն բեմ հրատարակ պ. վարդան, նախագահելու համար ժողովին:

Պ. վարդան ընդունից առաջարկը յայտարարելով միանգամայն, որ իր իրաւունքները կուտային անձ, ֆուէքս զերք պիտի բռնէ և ի հարկին, պիտի պաշտպանէ իր կուս. շահերը:

Ասիէ ետքը՝ պարտն նախագահը բացուած յայտարարեց ժողովը ու բեմ հրատարակ օրուան ամենախօսքը:

Պ. Հրատարակ, նախ քան ներկայի մասին խօսելը, պատմական թուուցիկ անտուրիւն մը ըրաւ և շեշտեց 80-ական թուականներու հայկական իրականութիւնը, սրտելով միանգամայն հայ և թիւրք տրամադրութիւններն ու քաղաքական յարաբերութիւնները: Ետ քան, որ այլևս Հայը անկարող էր պահպանողական գերքի մէջ մնալ, քանի որ թիւրք կտաւարութիւնը բացարձակ կռիւ էր հրատարակած հայութեան բնաջնջումին համար և հետևաբար հասած էր ժամանակը որ սարսակ Հայը մէջտեղ դար

որպէս զգոն, որպէս բողոքող տարր: Հայութեան այդ բողոքի արտայայտիչները եղան այդ ժամանակ մի խումբ հայ երիտասարդներ, որոնք եւրոպական համալսարաններու մէջ էին կրթուած և որոնք գրաւոր և բանական հայութեան ցոյց տուին այն միակ միջոցը — զէնքը. որի-չնորհիւ միայն կ'երաշխաւորուէր հայութեան ապագան:

Սոյն պրօբազանդայի շնորհիւն էր, որ 1—2 տարուայ ընթացքի մէջ վերջնականապէս կազմակերպուեցաւ Հնչակեան Սօց. Յեղ. կուսակցութիւնը և որ չի կանգնեցաւ միայն խօսքի վրայ, այլ ուղղակի զինեց Գործին, մեծ Գործին:

Անոր առաջին գործը եղաւ Գում-Փարուի ցոյցը, որուն յաջորդեցին ասպատակային շարժումները և տէրօրական խոշոր գործողութիւնները: Ապա թուեց Մասնոյ զիւրացողական կռիւները, ընդգծելով որ նոյն այդ կռիւներու արդիւնքն էին Մայիսեան ըէֆօրմները և զորս գործադրութեան զննելու համար հարկ եղաւ Պապ-Ալիի Հնչակեան ցոյցը կատարել, որով և սարկիւ Մեծ-Մարտապահներն՝ արիւնտ ձեռքերով ստորագրել յիշեալ ըէֆօրմները: Գեղեցիկ կերպով զրուատեց նաև Ձէյթլուի հերոսական կռիւները, որ վերջացաւ թշնամու պարտութեամբ:

Ճիշդ այս միջոցներուն, երբ հայութիւնը կը քարակոտորած օրը օրին իր յոյսերու իրականացման կը սպասէր, հակադրական անգոյն տարրեր անգարեցին սողալ յեղափոխարեութեան մէջ՝ գէթ ապստամբ ազատութեան բարիքներէն ու փառքէն չի զրկուելու համար: Ու այդ եղաւ Հընչակեան զգալիութեան մեծ պատճառներէն մէկը:

Հագիւ մի վարկեան հայկական

հորիզոնը փայտատակեց և ահա հասան հարածանքի օրերը: Հիւսիսի Մեծ-Աւազակը եկաւ թեւ ու թիկունք լինելու իր Մեծ ելլար, Մեծ-Մարտապահին, խորհուրդ տալով անոր Հայկական հարցը լուծելու անուղի կոտորածներով:

Մի քանի ամիսից խոր սարսակու լուծելու և ապա մեծ շրջափոխութիւն:

Այլևս ժամանակէն էր որ Հայ յեղափոխութեան ինքն սին հակառակորդները զլուխ բարձրացնէին ու բարձրաձայն անիծէին հայ հերոսները, հայ մարտնչողները: Այլ ևս ժամանակէն էր որ ինչպէս իրականացը իր սեւ հօգիին զայն մաշը թափէր Հայ Յեղափոխութեան գլխուն: Ու չկանգնեցան այդպիսիները:

95 թ-ի կոտորածները էազէտ այնքան չի կրցան վնասել հայ յեղափոխութեան, որքան 96 թ-ի հանրաձայնութեամբ և ազէտ սրբ պատակոտորածները, որոնք Հայ Յեղափոխութեան էս ու ժեղ ֆաթթօնը կողմ Հնչակեան կուսակցութեան՝ բաժանուած ատաղաշուցին:

Ու այսպէս հայ յեղ. շարքերում մէջ յատաշարաւ ընդհանուր ընկալելու, որ կարող էր խիստ վատնուած օրոյն ստանալ, կ'իջ մի այլ յեղ. ֆաթթօն Հ. Յ. Դաշնակցութիւնը իր մի քանի տարուան լուրի կազմակերպութեան յետոյ, չի գար նոյն այդ ճգնաժամին իր դերը ստանձնել և շարունակել այն կռիւնը, զոր սկսած էր Հնչակեան կուսակցութիւնը: Երեսը յետոյ կ'ընք, յարեց պ. բանաստեղծ, որ նա կը շարունակէ իր դերը մինչև վերջ:

Հնչ. կուս. ը կոչուեցաւ այլևս իր ուժերը, 1896—901 թուականը թէ և չկրցաւ զօրեղ գործ մը ընել, սակայն իր մնացորդ անձնուէր ուժերով վճեց իր գործը յարձք պահել կուրծք տալով ամէն խոչըդոտներու: Եւ հա-

### ԱԻԵՏԻՍ ՆԱԶԱՐԿԷԿ

### ՉԱՐԱԽՕՍ ԹՁՈՒԿԸ

(Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ ԵՒ ՇԷՍՏԻՆԵ)

Սուրբ է Առաքելականի ասածը, թէ Մէլիք-Ազարեանցի աղջիկը հեռացած է իր ամուսնից, որովհետև նրան... «փախցրին»...

Զրկարարից, որ հանդիսանում է ո՛չ միայն զգուշի ճճի, այլ և կատարելապէս գաղափար մէկը իր աղջկուական կեղտոտ երեւակայութեան և իր նարեկական սպորաբարձ զգոտեցանքներով: Եւ հոգու ու մտքի աճ պիտի նկարագրի ունեցող մարդը զուր յանգնում է իր ինչ ձեռքով ձեռքը, հրապարակել վրայ իրան ձուացնել գրող, մինչև իր հայեացքները զլորում են նրան անիական շուկայի մէջ տեղը...

Նախ քանինք մի քիչ այդ ամէնական ուղեղը: Բանից դուրս է գալիս, որ ինտելիգենտ շրջանում ազատ գաղափարներով կրթուած մէկ աղջիկ նոյն ստրուկն է, ինչ որ մէկ ամբողջի աղջիկ, որը գտնուած է նահապետական ու հարեմական կամ կիսահարեմական միջնորդութեամբ: Այլ մի անսակցից ինտելիգենտ մէկ աղջիկ պէտք է նոյնպէս զուրկ համարել ամեն անհատականութիւնից, կամքից, մտաւոր ու հոգեկան ինքնուրոյն աշխարհից, որոշ հայեացքներից ու գատուութիւնից, ինչպէս ամբողջ այն ուրբէտ աղջկան, որին կրթութիւն են հրուհնագանգութեան ու ճորտայան ոգով, որի հոգուց, զեռ փոքրութիւնից ըս-

կած, սիտեմար դուրս են պոկում ամեն անհատական յասկութիւն, ամեն թարութիւն, ամեն երիտասարդայան զեղում, ամեն ազատ ու անկախ զգացում և այս գլուխը լցնում անիական ու պատաւական նախապաշարումներով, դատապարտում նրան անիական կաշկանդիչ ու բարոյապէս քայքայող ու սպանող սովորութիւններ և նրան ու կացի, և այդ անիարոյալիս կրթութեան արգելներն է այն, որ, առյաւելի զուսնաս էտի, արդէն այլակերպուած ու այլանգակուած է նրա վատ երիտասարդութիւնը և մարդկային կերպարանը. նա ո՛չ միայն անբարոյական կրթութիւն է, այլ և բարոյական ոճաբարձութիւն է: Եւ Առաքելականի ահա այդ անսակցից է նախում աղջկան կրթութեան վրայ, մասնաւորապէս որ մի վայրկեան անգամ ինքն իրան հարց չէ տալու, թէ արդեօք աղջիկն էլ մարդ չէ՞ և ուրեմն իր սեփական հոգու ու կեանքի միակ տէրը: Այդ ամէնը, որքան էլ եւրօպացու գլխարկ հագնէ, չէ կարող փոխել իր գլխարկի տակ գտնուած գանկի ողորմելի դարունակութիւնը, ուր ո՛չ զէպի կինը և ո՛չ զէպի աղջիկը չը կայ ո՛չ յարգանք, ո՛չ ազատ հայեացք, ո՛չ բարոյական հասկացողութիւն: Նրա անսակցից կինը ամուսնու սեփականութիւնն է և իրը, իսկ աղջիկը՝ հօրը, հէնց նոյն սկզբունքով ինչպէս կալածածք սեփականութիւն է կալածածանքի և կամ կողմն ու կըր՝ զիւրացու: Երա անսակցից կինն ազատ և ինքնակամ կեանքից չէ իր ամուսնու, ինչպէս և աղջիկը հոգեպէս ու մտաւորապէս մէկ ինքնուրոյն և ազատ էակ չէ՞, որը կա-

րողանայ և որի իրաւունք լինի ունենալ իր զգացումները ներքին ինքնուրոյն աշխարհը և ձգտել զէպի իր անհատական ինքնուրոյնութիւնը, զէպի մի կեանք, մի նիստ ու կաց, որ ընտրած է նրա խելքն ու սիրտը, զէպի իր համակրութիւններն, բնական առողջ հակումներն, այլ և իզէպիներ իրագործումը: Ո՛չ, մըտածում են աղջիկ ու իւրաւորապէս Առաքելականները, կ'ընեն, աղջիկը չը պէտք է լինելու և իրաւունք չունեն լինելու մարդկային ազատ էակներ: կ'ընեն պէտք է լինի ամուսնու սարսուկը տան ազատիւնը և զուարճութեան աւարկան, իսկ աղջիկը պէտք է իր կեանքում լինի խոնարհ, հնազանդ, հլու. — և այդ նրանք անսանուկ են լինել «խելօք աղջիկ», — պէտք է իր կեանքում միշտ, անզաղար ընթանայ իր հօր կամքով, որ շատ անգամ ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ կամայականութիւն, պէտք է ընթանայ իր ծնողներին նախապատճառ հին յորով, որ ամուսնարակ ուրիշ ոչինչ չէ նահապետ, եթէ ոչ բունութեան գործադրութիւն երիտասարդ սեքնդի վրայ ու գլորիլ նրան մէկ անցեալ կեանքի ներսած ու փոսած և կամ այլ կերպ այլատեսուած և անբարոյականացուցիչ միջնորդութեամբ: Եւ Առաքելականները յայտարարում են որ ամեն չեղումն այդ ընթացքից պէտք է նիստուէ իրեն անբարոյականութիւն և կամ մեր ներկայ պարագային, իրեն մի շարքէն գայթակղութիւն, խորտաւնասութիւն, «հիպոստոսիս»... Օ՛, կրտսիկական տխրութիւն... Մի մեքենայ, մի խաղայիկ, մի գործիք, անկամք, անանձ, առանց անհատական հոգու,

մտքի, զգացման ու գաղափարութեան... այլ խօսքով, մի հարմիր կին, մի շուր աղջիկ, մի սարսակ էակ — ահա հրապարակ վրայ զէպի սեղ, հարեւաների առաջ պոչ թափ տուց մէկ Առաքելականի հոգին ու խօսքը: Եւ այդ արձեատը վարպետութեամբ գործադրող մեծապատիւ մուրացկանը շարունակուած է իւր փնջ նահապետական սրտերին և իր շինծու բարկութեան ազատ սպարէզ տալով՝ պոտուած, կանչվորտում է թէ, անեղք ինչ անուրբ բան, աղջիկը սիրելի և մէկ անձի, որը սիրելի չէր հօրը, սրբ անուամուսնացած մէկն էր, ինչպէս երբեք է, աղջիկը պէտք է իր հօրից և Առաքելականից կանխապէս խորհուրդ հարցնէր, թէ արդեօք ի՞նչ անձի պէտք է սիրէ, և կամ ամուսնանալու համար մէկն ի՞նչ պէտք է իսկ աղջիկը յանգնել է սիրել... Օ՛, ի՞նչ ստակալի ոճիք: Միքիլ — ի՞նչ իրաւունքով է համարձակուել նա սիրել անանց հօր թոյլտուութեան ու հրոտանի (գոցէ և Առաքելականի) և այն էլ ի՞նչ, սիրել այն մարդուն, որ ամուսնացած է: Այդ վրիս խայտառակութիւն անսնուած կ'ոչ աշխարհում... Ասիական հարեմի և կողմ նահապետական ճորտութիւնն անհատական ամբողջովին մարմնացած է այդ անհիմն թու ամուսնու, բայց և բուսակալ ու վայրագուցիչ գոտանցանքներ լինել:

(Շարունակելի)

